

S. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ»

(պարամաքրային քննության փորձ)

Ալէլուիա, ալէլուիա

Հոյս զուարթ սուրբ փառաց անմահի Հօր երկնաւորի

սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս: Եկեալքս ի մտանել արեգական

տեսաք զլոյս յերեկոյիս: Օրհնեմք զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ Աստուծոյ. եւ
ամենեքեան ասեմք ամէն: Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ օրհնել ձայնիւ երգով
զանուն փառաց ամենասուրբ Երրորդութեանդ. որ տայ զկենդանութիւն.

վասն որոյ եւ աշխարհս զքեզ փառաւորէ:

Օրհներգի պարամոթյունն ու փարածումը

Եկեղեցական այս օրհներգն արեւելյան եկեղեցիների, այդ թվում նաեւ Նայ Առաքելական սուրբ եկեղեցու երեկոյան ժամերգության մաս է կազմում: Այն ոչ միայն կիրականամբից ժամերգության կարեւորագույն եւ բնորոշ միավորներից է, այլեւ արեւելյան որոշ եկեղեցիներում, հապկապես վանքերում՝ ամենօրյա ժամասացության բաղկացուցիչ մաս: Ուղղափառ, ինչպես նաեւ Արեւելյան ուղղափառ եկեղեցիների կողքին այն փարբեր թարգմանություններով ու խմբագրություններով լայնորեն օգտագործվում է նաեւ բողոքական, հապկապես Անգլիկան եւ հյուսիսամերիկյան Եպիսկոպոսական եկեղեցիների կողմից (իմա «Evening Prayer»):

Այս օրհներգի մասին ամենավաղ տեղեկությունները, թեկուզեւ անուղղակի կերպով, մեզ է փոխանցում Ս. Բարսեղ Կեսարացին: Իր «Սուրբ Նոգի» գրվածքում (ամենայն հավանականությամբ շարադրվել է 370-ական թթ. առաջին կեսին) նա խոսում է երեկոյան «ἐπὶ λύχνιον εὐχαριστία», այսինքն՝ լույսի ծագման ժամանակ արքայասանվող գոհաբանական աղոթքի մասին, որի ընթացքում հավաքացյալն Ամենասուրբ Երրորդությանն ուղղված փառաբանական մի աղոթք է արքայասանում՝ «Αἰνοῦµιν Πατέρα καὶ Υἱὸν καὶ Πνεῦμα Θεοῦ»՝ «Օրհնում ենք Հորը, Որդուն եւ Սուրբ Նոգուն»: Փառաբանական այս վերջին հապվածն ամենայն հավանականությամբ մեծ փարածում է ունեցել ժամանակի հավաքացյալների մեջ, որովհետեւ եկեղեցու հայրը գրում է, որ ինքն օգտագործում է հնագույն մի ավանդություն, ինչից ինքը բնականա-բար «հնության [արժանահավաքության] պարճառով չէր կարող հրաժարվել»¹:

Պլանկն այն համոզումն է արքահայրում, որ Բարսեղ Կեսարացու սույն հապվածի մասին XI-XIV դարերից եկող մեկնաբանություններն իրենց ժամանակ փարածված այն պարկերացումն են առաջ բերում, որ Ս. Բարսեղն այսպեղ միանշանակ «Լույս զուարթ»-ը նկարի ուներ²: Մի կողմից բնագրի բառամթերքը, իսկ մյուս կողմից էլ խնդրո առարկա

¹ Basilius von Caesarea, De Spiritu Sancto; Fontes Christiani, Hrg. N. Brox, Wilh. Gerlings u.a., Freiburg 1993, 301.

² Der Orthodoxe Vesperegottesdienst. Sämtliche Chor- und Lektorenteile nebst den Eigentexten des Sonntagsok-

օրհներգի բնագրում Կել Գրամ եւ իմանալի լույսին ուղղված փառաբանական աղոթքի, առնվազն գոնե միջին հասարակածի գործածությունը Կիւրեական եկեղեցւոյ այս նշանավոր այրին դարձնում է երեկոյան ժամասացության այս գոհարի գոյության ամենահին վկաներից մէկը: Ս. Բարսեղին արդեն հայրնի՝ էր այս օրհներգի այսօրվա Կարբեակը, թե՛ ոչ, - հարցին չենք կարող հստակորեն պատասխանել:

Նամեմարության կարգով Պլանկը վերլուծում է Նիպպոլիփոս եպս. Բոսպրա-ցուն վերագրվող «Առաքելական հրահանգներ»-ի (Traditio Apostolica) մեջ նկարագրված լույսի փառաբանությունը, լույսին նվիրված հրեական ծիսական արարողությունները (ՌՃԴԲ-բըրախա), ինչպես նաև նորկրակարանյան փարբերփեքսեր եւ գալիսայն եզրակացության, որ առնվազն բնագրի միջին մասն իր լույսի թեմափիկայով եւ փառաբանական աղոթքով հասնում է մինչեւ հնագույն, իսկ ավելի ստույգ՝ նորկրակարանյան կամ առաքելական շրջան, եթե անգամ ոչ բառացի, բայց գոնե թեմափիկ առումով³:

Բնագրի վերլուծություն

Օրհներգի բովանդակային կառուցվածքից ելնելով՝ այն կարելի է բաժանել քրիստոսաբանական երկու տողերի, որոնցում նախ Զրիստոսն է փառաբանվում, ապա նաև երրորդաբանական միջին մասի, որի մասին էլ հաղորդում է Ս. Բարսեղ Կեսարացին:

Օրհներգի կապարման ժամանակի ու առիթի հետ կապված խնդիրն իր լուծումն սպանում է միմիայն միջին հապվածի շնորհիվ՝ «ի մտանել արեգական, քեզաք զլոյս յերեկոյիս»: Ս. Բարսեղն այս առիթով գրում է, որ հիմնը պետք է երգել, «որպեսզի մարդ ոչ թե երեկոյան Լուսի շնորհը լոռոյամբ ընդունի, այլ նրա ծագման ժամանակ շնորհակալութիւն հայարնի»⁴: Ուրեմն այսպէս խոսքը երեկոյան ծագող լուսին մաքուր ցփելիք շնորհակալութեան մասին է, լույս, որը ծագում է, երբ բնական լույսն արդեն խավարած է լինում:

Քրիստոսաբանական առաջին փող

Լույսի պատրկերը

Φῶς ἱλαρόν ἁγίας δόξης ἀθανάτου Πατρός,

οὐρανίου ἁγίου μάκαρος Ἰησοῦ Χριστέ

Անարիկ գրականության մեջ $\phi\omega\varsigma$ -ը մաքրանշում է արեւի արձակած ցերեկային լույսը՝ ի հակադրություն գիշերվա խավարի: Այդ պատճառով էլ այն երբեմն իբրեւ «օր» բառի հոմանիշ է օգտագործվում: Երեկոյան լույսի մասին պատկերացումների ենք հանդիպում մարգարեական գրականության մեջ: Օրինակ, համար Զաքարիա մարգարեն վախճանաբանական-հավիտենական փրկությունը երեկոյան լույսի պատկերով է ներկայացնում.

toich, eingerichtet für mehrstimmigen gemischten Chor, bearb. von K. Sponsel und P. Plank, Recklinghausen 1988, 6.

3 Պլանկը կարծում է, որ Բ Պեպր. Ա 19-ի՝ «Ունենք նաև մարգարեական ավելի հասարարուն խոսքը, - որին եթե անսանք, լավ կանենք, - իբրև ճրագ, որ լույս է փալիս մութ փղղում՝ մինչև որ լուսանա օրը, և արուսյակը ծագի ձեր սրբերում» հարվածը «Լոյս գուարթ»-ի միջին հարվածի նմանողությամբ լույսի փառարանություն է ննթաղում, փնս անդ, էջ 63:

4 «De Spiritu Sancto», лж 301.

«Դա պիտի լինի միայն Տիրոջը հայրնի օր. ո՛չ ցերեկ պիտի լինի եւ ո՛չ էլ գիշեր, այլ լույս պիտի լինի միայն երեկոյան» (Ջաք. ԺԴ 7):

Չափազանց կարեւոր է նախադասության վերջին հարվածը: Այսպէս լույսի համար օգտագործված $\phi\omega\varsigma$ $\epsilon\sigma\pi\epsilon\rho\iota\nu\acute{o}\nu$ -ը մարնանշում է ոչ թե լամպի թույլ լույս, որ գիշերը մայր մըրած արեւի փոխարեն է լուսավորում, այլ լույս, որն իրար հաջորդող լույսն ու խավարը, ցերեկն ու գիշերը մեծ եւ անվերջանալի լուսավորությամբ է լուսավորում⁵: Սուրբգրային լույսի վախճանաբանական պատկերացումներն իրենց արտահայտությունն են գտնում Եսայու մարգարետության մեջ, որպէս զորությունների Տերը, իբրեւ «հավիտենական լույս», մայր չի մըրնելու մինչեւ վերջին օրը, երբ Տերն Ինքն է միայն լուսավորելու (հմմտ. Ես. Կ 19-20, Նայր. ԻԲ 5):

Աստվածաշնչի Յոթանասնից թարգմանության մեջ $\phi\omega\varsigma$ -ն օգտագործվում է ավելի լայն իմաստներով. օրինակ՝ որպէս Աստծո պատվիրան (Սղմ. ՃԺԸ 105, Առակ. Ձ 23, Իմաստ. ԺԸ 4), որպէս Աստծո ծառա (Ես. ԽԲ 6, ԽԹ 6), նաեւ որպէս Աստված (Ես. Կ 19-20): Նինկաբարանյան այս պատկերացումները պարարտ հող են նախապատրաստում Նոր Կտակարանում Քրիստոսի մասին իբրեւ $\phi\omega\varsigma$ Լույս արտահայտվելու համար («Եւ այդ կյանքը մարդկանց համար լույս էր: Եւ լույսը խավարի մեջ լուսավորում է, եւ խավարը նրան չնվաճեց», Նովհ. Ա 4-5):

Այսպիսով $\phi\omega\varsigma$ $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$ -ը կանգնած է Լույսի քրիստոսաբանության ավանդույթի հնագույն ակունքներում, որն իր արտահայտությունն է գտնում Նին Կտակարանում եւ բյուրեղանում Նովհաննու ավերարանի մեջ:

$\phi\omega\varsigma$ $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$ -ը քարքեր խմբագրություններում թարգմանվել է որպէս «գուարթ» «ուրախ» լույս: $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$, $\iota\lambda\alpha\rho\acute{o}\tau\eta\varsigma$, $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$ ածականները Յոթանասնից թարգմանության մեջ ամենից հաճախ օգտագործվում են Իմաստության գրքերում: Այսպէս դրանք կիրառվում են Աստծուց սրացած շնորհը (Առակ. ԺԸ 22) կամ թագավորի կողմից ցուցաբերված հաճությունն արտահայտելու համար: $\Pi\rho\acute{o}\sigma\omega\pi\omicron\nu$ $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$ -ն այսպէս օգտագործվում է ճառագող, բարեգութ դեմքի համար, որ դառնում է դեպի մեզ:

Աշխարհիկ ոլորտում $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$ -ն օգտագործվում է որեւէ առարկայի գույնը կամ ջերմաստիճանի չափը ցույց տալու համար: Այսպէս, օրինակ, ոսկու՝ մեքաղահալ վառարանում $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$ դառնալուց հետո, երբ դրան կարմիր սինոպ նյութ խառնվի, ոսկու զանգվածը կկրկնապատկվի: $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$ -ն այսպէս մարնանշում է շիկացած ոսկին, որ կարող է նաեւ թարգմանվել իբրեւ պայծառ, փայլուն, ճառագայթարձակ: Դրա համար էլ Պլանկն այս օրհներգի համար առաջարկում է «պայծառ լույս» արտահայտությունը:

Կառուցվածքը

Առաջին քողն ունի շաք յուրահատուկ մի կառուցվածք: Միայն վերջին երկու բառերը՝ կոչական հոլովով դրված Ἰησοῦ Χριστέ-ն է, որ $\phi\omega\varsigma$ $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$ -ը Նիսու Քրիստոսին է վերապահում, մնացյալ ածականները՝ $\acute{\alpha}\theta\alpha\nu\acute{\alpha}\tau\omicron\varsigma$, $\omicron\upsilon\rho\alpha\nu\acute{\iota}\omicron\varsigma$, $\acute{\alpha}\gamma\acute{\iota}\omicron\varsigma$ եւ $\mu\acute{\alpha}\kappa\alpha\rho\omicron\varsigma$ ուղղված են Նորը, այնպէս որ խոսքն այսպէս ավելի շաք Նոր մասին է, քան Որդու: Առաջին քողի երեք գոյականներից յուրաքանչյուրն ունի իր ածականը՝ $\phi\omega\varsigma$ $\iota\lambda\alpha\rho\acute{o}\nu$, $\acute{\alpha}\gamma\acute{\iota}\alpha\varsigma$ $\delta\acute{o}\xi\eta\varsigma$ եւ $\acute{\alpha}\theta\alpha\nu\acute{\alpha}\tau\omicron\upsilon$ $\Pi\alpha\tau\rho\acute{o}\varsigma$:

5 Der Orthodoxe Vespergottesdienst, էջ 66.

Սուրբ փառքը՝ ἁγία δόξα, բերականորեն կարող է թե՛ Φῶς ἱλαρόν-ին, այսինքն՝ Զրիստոսին, եւ թե՛ ἄθανάτον Πατήρ-ին վերաբերել: Նին Կրակարանում ճօճա-ն հետեւյալ իմաստն է արտահայտում. օրինակ, Յոթանասնից թարգմանության մեջ դրան համարժեք «ܡܠܟܐ քարոյ» հասկացությունը նշանակում է ծանրություն, կշիռ, հարսություն, Ասրծո ղիրք, իսկ Եզեկիելի մարգարեության մեջ (1-3; 8-11; 43-44) սրանում է ավելի վճռական բնույթ եւ մոտավորապէս արտահայտում «ինքնուրույն էություն» կամ «աստվածային առանձնավորություն» իմաստները, որից էլ հետեւում է, որ Ասրծո մեծությունը մաքնանշում է հենց Իրեն՝ Ասրծուն: Այս իմաստով Նոր Կրակարանում Ասրծո՝ որպէս ճօճա-ի մասին պարկերացումն իր արտահայտությունն է գրնում Ղուկասու ավերարանում, մինչդեռ նորկրակարա-նյան մյուս գրքերը ճօճա-ն օգտագործում են Զրիստոսի համար, եւ այն էլ՝ բացառաբար հարության համարեքստում: Այսպիսով ճօճա-ն կիրառելի է հավասարապէս թե՛ Նոր եւ թե՛ Որդու համար:

Նամաձայն Ա Տիմ. Զ 14-16-ի՝ Աստված լույսի մեջ է բնակվում, սակայն Նա լույս չէ: Լույսը, ինչպէս այս օրհներգում, սերտ կապի մեջ է Նոր հետ: Այս միտքն անկասկած կանգնած է վաղ քրիստոնէական Լույսի քրիստոսաբանության, ավելին, նիկիական հանգանակի ավանդության սկունքներում:

Ա Տիմ. Զ 14-16-ի հետ ամենամեծ տարբերությունը հետեւյալն է.

1. Լույսն Ինքը՝ Զրիստոսն է, որ սերտ հարաբերության մեջ է Նոր հետ,
2. Զրիստոսի հետ նույնացվող լույսն անմարչելի (ἄ-πρόσιτον) չէ, այլ՝ ἱλαρόν, այսինքն՝ լուսավոր, ողորմած մարդկանց եւ միեւնոյն ժամանակ ողջ արարչության հանդեպ, ասել է թե՛ մարչելի: Անմարչելի եւ բացարձակ անդրանցական Աստված եւ Նայրը մարչելի է դառնում Զրիստոսի միջոցով⁶:

Պլանկը ստորակարգման ենթադրական կասկածի դեմ այսպէս է գրում. «Եթե Որոգինեսը Φῶς ἱλαρόν-ի սկսվածքը Ս. Գրոց մեջ գրներ, ապա նա վստահաբար այն պիտի ներառեր իր Նովիաննու մեկնության սուրբգրական ապացույցների շարքում... Նաստապ է նաեւ, որ ուղղափառ շրջանակները Նիկիո Տիեզերաժողովից հետո Φῶς ἱλαρόν-ի սկսվածքն այսպէս չէին բանաձեւի, քանի որ այն չարափառ իմաստ է պարունակում»⁷:

Սեռական հոլովով դրված երկրորդ տողը նույնպէս բաղկացած է երեք մասից՝ οὐρανίου ἁγίου μάκαρος, եւ, ինչպէս առաջին տողի ἄθανάτου-ը, վերաբերում է Նորը: Երկրորդ տողի երեք ածականները կապի մեջ են առաջին տողի երեքի հետ՝ Φῶς ἱλαρόν-ը οὐρανίου-ի, ἁγίας δόξης-ը ἁγίου-ի, եւ ἄθανάτου Πατρός-ը μάκαρος-ի հետ: Սրացվում է մոտավորապէս հետեւյալ պարկերը՝ «Երկնային զվարթ լույս, սուրբ, սուրբ փառք, կենարար Նոր անմահություն»:

Որոշ մակդիրներ բացառապէս վերաբերում են Նորը՝ Πατήρ-ին (բնագրում սեռական հոլովով՝ Πατρός). նախ սեռական հոլովով ἄθανάτος (անմահ), եւ ապա երկրորդ տողի οὐρανίος (երկնավոր), ἅγιος (սուրբ), եւ μάκαρος (կենարար):

Ἀθανάτος-ը (անմահ) Աստվածաշնչի եբրայեցերեն բնագրում չունի իր համարժեքը, սա ըստ էության հելլենիստական մի հասկացություն է, որը նաեւ Նոր Կրակարանում Ասրծու համար շատ հազվագյուտ է գործածվում (հմմտ. Ա Տիմ. Զ 16):

6 Անդ, էջ 88:

7 Անդ, 93:

Οὐράνιος -ը, որպես աստվածաբանական եզր, նույնպես մեզ ոչինչ չի ասում իր գրական կամ հոգեւոր դրսեւորումների մասին: Նույնն է նաեւ մάκαρ-ի պարագան, որն այս ձեւով զարմանալիորեն ո՛չ Նին Կրակարանում (LXX) եւ ո՛չ էլ Նոր Կրակարանում է հանդիպում: Եւ միայն նորկրակարանյան որոշ գրքերում է՝ Տիմ., Տիմ. եւ Նայքն., որ մաκά-ը գործածված է. հավանաբար գալիս է հունարեն χαίρω (ուրախանալ) կամ μακρός (մեծ, բարձր) բառերից եւ կարող է նշանակել μακάριος (երանելի): Այս եզրը մեզ հայրնի է Երանիների շարքից, սակայն որպես այդպիսին գործածված է միայն մարդկանց համար:

Եվ միայն ἅγιος-ն է (գործածված երկու անգամ՝ մեկ անգամ Նոր եւ մեկ անգամ Որդու համար), որ ծագում է աստվածաշնչային-երրայական աստվածաբա-նությունից, մինչդեռ մյուսները, ինչպես նշվեց, հեթանոսական-հելլենիստական ծագում ունեն:

Երկրորդ երրորդաբանական տող.

ἐλθόντες ἐπὶ τὴν ἡλίου δύσιν
 ἰδόντες φῶς ἐσπερινόν,
 ὑμνοῦμεν Πατέρα καὶ Υἱὸν
 καὶ Ἅγιον Πνεῦμα Θεοῦ.

Անտիկ Լույսի փառաբանության նկարագրություն գրնում ենք արդեն Նիպաոլիտոս եպս. Բոսորացուն վերագրվող «Առաքելական հրահանգներ»-ի (Traditio Apostolica) մեջ: Մայրամուտին սարկավազը պարբերաբար է լույսը եւ փանում այն հավաքված համայնքի մեջ. սարկավազն ինքը, իսկ եպիսկոպոսի ներկայության դեպքում՝ վերջինս, արարասանում է լույսի գոհաբանությունը: Սրան հաջորդում է եպիսկոպոսի կամ երեցի գոհաբանությունը հացի եւ գինու վրա, որից հետո տեղի է ունենում սիրո ճաշը բացման հետեւյալ աղոթքով.

«Գոհություն ենք հայրնում Քեզ, Տեր, Քո Որդու եւ մեր Տիրոջ Նիսուս Քրիստոսով, ում միջոցով Դու մեզ լուսավորեցիր անմաքույց լույսի հայրնությամբ: Մենք ավարտեցինք մեր օրը եւ հասանք գիշերվա սկզբին: Մենք հագեցանք օրվա լույսով, որ Դու մեր գորացման համար սրեղծեցիր: Եւ այժմ քանի որ մենք Քո երեկոյան լույսի բարիքներից զրկված չենք, գովում եւ փառաբանում ենք Քեզ Քո Որդու՝ Նիսուս Քրիստոսով, ում միջոցով եւ Սուրբ Նոգու հետ միասին Քեզ գորություն, իշխանություն եւ պարիվ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս. Ամեն»:

Առաքելական հրահանգներ

Երբ մենք հասել ենք

գիշերվա սկզբին...

Եւ այժմ քանի որ մենք

երեկոյան լույսից... զրկված չենք,

մենք գովում եւ փառաբանում ենք

Քեզ Քո Որդու միջոցով

Եվ Սուրբ Նոգու հետ:

Φῶς ἱλαρόν

ἐλθόντες

ἐπὶ τὴν ἡλίου δύσιν

ἰδόντες

φῶς ἐσπερινόν

ὑμνοῦμεν

Πατέρα καὶ Υἱὸν

καὶ Ἅγιον Πνεῦμα Θεοῦ

Նապրկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ Փօճ 'իλαρόν-ի միջին մասը չի պարունակում այնպիսի մի հապված, որը Նիպաոլիպոսի լույսի գոհաբանության մեջ կան բառացի, կան բովանդակությամբ իր արտահայտությունը չի գտնում: Ուստի կարող ենք ասել, որ Փօճ 'իλαρόն-ի միջին մասը երեկոյան լույսի գոհաբանության մի կարճ, բայց ամբողջական միավոր է:

Վերջում երկրորդ փողին վերաբերող երեկոյան լույսի գոհաբանության աստվածաբանական մի մեկնություն ներկայացնենք, որի հավանական հեղինակն է Կիպրիանոս Կարթագենացին. «Երբ մենք արելը մայր մտնելու եւ օրվա անհետացման ժամանակ աղոթում ու խնդրում ենք, որպեսզի լույսը կրկին մեզ համար բացվի, ապա մենք խնդրում ենք Քրիստոսի գալուստը, որ մեզ հավիտենական լույսի շնորհ կբերի... Եւ երբ մշտական փոփոխությամբ գիշերը վրա հասնելով ցերեկն է վերացնում, գիշերային մթնոլորտն աղոթողին ոչինչ չի կարող անել, որովհետեւ լուսո որդիների⁸ համար ցերեկ է անգամ գիշերը: Այդ դեպքում հնարավոր է, որ մեկն առանց լույսի ապրի, երբ լույսն իր սրբում է: Կամ հնարավոր է, որ մեկը արելի ու ցերեկվա պակաս չգգա, երբ Քրիստոսն է նրա եւ արելը եւ ցերեկը»⁹:

Երրորդ քրիստոսաբանական փող.

Άξιός [Άξιόν] εἶ [σε] ἐν πᾶσι καιροῖς
 ὑμνεῖσθαι φωναῖς ὁσίαις [αἰσίαις],
 Ὑἱὲ Θεοῦ, ζῶν ὁ διδούς
 διὸ ὁ κόσμος σὲ δοξάζει.

Կառուցվածքային տեսանկյունից Փօճ 'իλαρόն-ի վերջին փողը որոշակի նմանություններ Նայրնության գրքի 4-րդ եւ 5-րդ գլուխների համապատասխան 4 հապվածների հետ¹⁰: Բնագրային համապատասխանությունները տեղի են ունենում ձեռական առումով՝ ἄξιός կոչից հետո (բացի Նայրն. Ե 13):

«Մեր սուրբ Տեր Աստված, արժանի ես»-ին հաջորդում են հասցեարիւրոջ փվյալները (բացի Ե 9):

«Մեր Տեր եւ Աստված. արժանի է Գառը, Նա, որ նստած է աթոռի վրա»: Սրան հաջորդում է փառաբանությունը եւ վերջապես՝ փառաբանության պատճառը՝ «Որովհետեւ Դու ես, որ սպեղծեցիր տիեզերքը ... Որովհետեւ Դու մորթվեցիր ...»:

Άξιός՝ «արժանի», նախնական իմաստով նշանակում է մեկին հավասարակշռության

8 «Տերը, լսելով այս, գովեց անիրավ տնային իր հնարամտության համար, որովհետեւ այս աշխարհի մարդիկ միմյանց հանդեպ իրենց վարմունքի մեջ ավելի ճարպիկ են, քան լույսի որդիները», Դուկ. ԺԶ 8; «Որովհետեւ դուք բոլորը լույսի որդիներ եք, ցերեկվա որդիներ: Մենք գիշերվան չենք պատկանում, ոչ էլ խավարին», Ա Թ-ես. Ե 5; «Որովհետեւ թեև մի ժամանակ խավար էիք, սակայն հիմա, որ միացած եք Տիրոջը, լույս եք: Ներելաբար, ապրեցեք լույսի որդիներին վայել ձեռով», Եփես. Ե 8:

9 Cyprianus, De dominica oratione 35, CChr. SL III A (1976), 112f.

10 «Մեր սուրբ Տեր Աստված, արժանի ես ընդունելու փառք եւ պատիվ եւ գործություն, որովհետեւ դու սպեղծեցիր բոլորը, եւ բո կամենալով սպեղծվեցին ու գոյություն ունեն», Յայրն. Դ 11; «Արժանի ես առնելու այդ գիրքը եւ բաց անելու դրա կնիքները, քանի որ մորթվեցիր եւ գնեցիր մեզ Աստծու համար, բո արյունով, բոլոր ցեղերից եւ լեզուներից ու հեթանոսների բազմություններից Յայրն. Ե 9; «Արժանի է այդ մորթված Գառը ընդունելու մեծություն, իմաստություն, գործություն, պատիվ, փառք եւ օրհնությունն Յայրն. Ե 12; «Նա, որ նստած է աթոռի վրա, ինչպես եւ Գառը, թող օրհնյալ, բարձրացյալ եւ փառավորյալ լինի հավիտյանս հավիտենիցն Յայրն. Ե 13:

բերել, Պողոս առաքյալի թղթերում ունի «ըստ», «համաձայն» իմաստը, իսկ համապատասխանում է նշանակում է Ավետարանի պատվիրաններին համապատասխան կյանք: Սրան հակառակ, Նովիանոս Նայրնության մեջ այն ունի *հաջողությամբ հանձնած քննություն* իմաստ. միայն Մեկը՝ Գառն է արժանի յոթ կնիքներով կնքված գիրքն Իր ձեռքն առնելու: Նոր Կրակարանում հազվագյուտ հանդիպող $\sigma\mu\nu\epsilon\sigma\theta\alpha\iota$ բայը համապատասխանում է հինկրակարանյան եբրայեցերեն לָקַח «տեղիւն» բային, որ նշանակում է «Աստծուն փառաբանել, գոհաբանություն մատուցել»:

$\epsilon\nu\ \pi\acute{\alpha}\sigma\iota\ \kappa\alpha\iota\rho\omicron\iota\varsigma$ ՝ «ամեն ժամ» արտահայտության միջոցով արտահայտված «պարեհ առիթ, հարմար ժամանակ», իսկ աստվածաբանորեն ձեռնարկված՝ «Աստծուց պարգևված վճռորոշ ժամանակահատված»-ն իմաստային առումով անպայմանորեն չպետք է հարմարվի խնդրո առարկա տեքստին: Նաև Յոթանասնից թարգմանության եւ նորկրակարանյան $\epsilon\nu\ \pi\alpha\nu\tau\acute{\iota}\ \kappa\alpha\iota\rho\acute{\omega}$ դարձվածքը, որ թարգմանվում է ,ամեն ժամե, տեքստի համար դիպուկ չէ ընտրված: Այսպես հոգնակիով գործածված արտահայտությունն ավելի շատ «պարբերաբար կրկնվող ժամանակակեր» իմաստն ունի, ինչպես օրինակ օրվա ժամերը, տոները եւն:

Ավելի ստույգ է $\zeta\omega\eta\nu\ \acute{o}\ \delta\iota\delta\omicron\upsilon\varsigma$ արտահայտության իմաստային նշանա-կությունը՝ վերցված Նովի. Ժ 28-ից, որտեղ Քրիստոս Իրեն իբրեւ հավիտենական կյանքի պարգևատրու է ներկայացնում: Որպես կյանքի պարգևատրու, եւ այն էլ՝ հավիտենական կյանքի, Նա փառավորվում է ողջ աշխարհից ($\kappa\acute{o}\sigma\mu\omicron\varsigma$): Սակայն խոսքը ո՞ր աշխարհի մասին է, որին պարտ է փառաբանել Քրիստոսին: Մինչ Նոր Կրակարանի տեքստերը գրչին կհանձնվեին, $\kappa\acute{o}\sigma\mu\omicron\varsigma$ բառն իմաստային հսկայական փոփոխությունների ենթարկվեց: Նախաքրիստոնեական հույն փիլիսոփաների համար դա տիեզերքն էր, որի հոմանիշն էր գեղեցկությունը, կարգ ու կանոնը, ներդաշնակությունը: Փիլոն Ալեքսանդրացին, սակայն, այս արտահայտությամբ նկատի ունի երկու հասկացություն՝ իմացական ($\nu\omicron\eta\tau\acute{o}\varsigma$) եւ էմպիրիկ ($\alpha\acute{\iota}\sigma\theta\epsilon\tau\acute{o}\varsigma$) աշխարհներ, որոնք միմյանց հետ նախապիպ-պատկեր հարաբերության մեջ են: Աստված այդ աշխարհի Արարիչը, Նայրը, Փրկիչն ու Թագավորն է, եւ Բանը, այսինքն՝ Լոգոսը, իբրեւ $\epsilon\acute{\iota}\kappa\omega\nu\ \Theta\epsilon\omicron\upsilon$ Նրա դեմիուրգն է: Այս տեսակետին հակառակ Նոր Կրակարանում չկա բացարձակ ներդաշնակության գաղափարը. տիեզերքը թեւ Աստծո ձեռքերի գործն է, սակայն իրեն հեռացրել է Աստծուց, խավար ուժերն են իշխում նրան (Ա Կորնթ. Բ 6-8, Նովի. ԺԲ 31; ԺԴ 30-31; ԺԶ 11), նրա իմաստությունը $\sigma\acute{\alpha}\rho\acute{x}$ -ն է (Ա Կորնթ. Ա 26-29)¹¹, Քրիստոս գալիս է որպես Փրկիչ (Նովի. Գ 17)¹²: «Ներմասի հովիվը» երկում առաջին

11 «Սակայն հոգևոր կարարելության հասանքին իմաստություն էլ ենք բարոգում: Բայց մեր բարոգածը ոչ այս աշխարհի իմաստությունն է եւ ոչ էլ այս աշխարհը կառավարող ուժերինը, որոնց իշխանությունը շուտով պիտի խորտակվի» Ա Կորնթ. Բ 6; «Հիմա է սկսվում այս աշխարհի դատաստանը: Հիմա այս աշխարհի իշխանը դուրս կնետվի» Յովի. ԺԲ 31; «Այլևս երկար չեմ խոսի ձեզ հետ, որովհետև ահա գալիս է այս աշխարհի իշխանը, որն ինձ վրա ոչ մի իշխանություն չունի: Բայց աշխարհը պետք է գիտենա, որ ես սիրում եմ Նորը, եւ այդ է պարճաթը, որ ես կարարում եմ այն ամենը, ինչ ես պատվիրեց ինձ. վեր կացեք, գնանք այստեղից» Յովի. ԺԴ 30-31; «Ձեզնից բանիս էին իմաստուն, հզոր կամ ազնվարոհ մարդկային չափանիշներով: Բայց Աստված ընտրեց այն, ինչ որ այս աշխարհը հիմար է համարում՝ նրանով իմաստուններին ամոթով թողնելու համար. ընտրեց այն, ինչ որ այս աշխարհը անարժեք, արհամարհելի եւ ոչնչություն է համարում՝ նրանով այս աշխարհի մեծություններին ոչնչացնելու համար: Եվ սա նրա համար, որպեսզի ոչ մի մարդ չպարծենա Աստծո առաջ» Ա Կորնթ. Ա 26-29:

12 «Որովհետև Աստված իր Որդուն աշխարհ ուղարկեց ոչ թե նրա համար, որ դատասպարտի աշխարհը, այլ որպեսզի փրկի աշխարհը» Յովի. Գ 17:

անգամ արտահայտված է այն միտքը, որ կόσμος-ը մարդու համար է ստեղծվել:

Պլանկը, ուսումնասիրելով առաքելական շրջանի բազմաթիվ աղբյուրներ, հանգել է այն եզրակացության, որ Սիրիայում, Պաղեստինում եւ Փոքր Ասիայում ստեղծված գրվածքները կόσμος եզրն օգտագործում են պողոսյան-հովհաննեսյան իմաստով, մինչդեռ հռոմեական եւ ալեքսանդրյան ծագում ունեցող գրվածքներն այս եզրն ավելի դրական իմաստով են ներկայացնում:

Եզրի պարսությունն ավարտվում է Որոգինեսով, որի աստվածաբանական հայացքն օրհներգի առաջին տողի հետ արդեն համեմատվել է: Որոգինեսը գրում է, որ ոմանք կόσμος-ը նույնացնում են եկեղեցու հետ. «Մենք գիտենք, որ կան ոմանք, ովքեր կόσμος-ի տակ նկատի ունեն բացառապես եկեղեցին, որը կόσμος-ի կόσμος-ն է, որովհետեւ նա նաեւ կόσμος-ի լույս է կոչվում: Դուք եք, այսպես է ասվում, կόσμος-ի լույսը (Մատ. Ե 14)»: Ըստ Որոգինեսի, Ս. Գիրքը թեւ ուսուցանում է, թե ինչպէս Քրիստոսն է կόσμος-ի լույս, նույնպես եւ Նրա աշակերտները, սակայն ոչ նույն իմաստով, որովհետեւ Քրիստոս անկասկած եկեղեցու լույսն է, սակայն եկեղեցին կόσμος-ի լույսը չէ, այլ միայն՝ չափազանց պայմանական ու փարբեր իմաստով:

Որոգինեսն օգտագործում է կόσμος եզրը, սակայն բոլորովին այլ իմաստով՝ որպես ներդաշնակության սկզբունք, որպես տիեզերք եւ կամ՝ մարդկություն, իսկ աշխարհը՝ որպես կյանքի փարածություն, եկեղեցի, որպես Քրիստոսով Աստծո հետ հաշտված աշխարհ: Այսպիսով Φῶς ἰλαρόν-ից եւ ուրիշ արձույններից կόσμος եզրի նոր իմաստային փարբերակ է ի հայտ գալիս, որ մարմանշում է տիեզերքն իր ամբողջության մեջ, մարդկությունը, ինչպես նաեւ եկեղեցին, որ փառաբանում է Քրիստոսին:

Նույն, փոխան եզրակացության, ներկայացնենք «Լոյս զուարթ» օրհներգի հայերեն եւ հունարեն փարբերակները՝ ընդգծելով առկա փարբերությունները:

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի
Նոր Երկնաւորի սրբոյ կենարարի
Յիսուս Քրիստոս: Եկեալքս ի մօրանել
արեգական տեսաք զլոյս յերեկոյիս:

Օրհնենք զՆայր եւ զՈրդի եւ զսուրբ
Նոգիդ Աստուծոյ: **Արժանի իցես**
յամենայն ժամ **օրհնիլ** ձայնի երգով,

Որդի Աստուծոյ, որ փայ
զկենդանութիւն. վասն որոյ եւ աշխարհս
զքեզ փառաւորէ:

Φῶς ἰλαρόν ἁγίας δόξης ἀθανάτου
Πατρός, οὐρανίου ἁγίου μάκαρος Ἰησοῦ
Χριστέ ἐλθόντες ἐπὶ τὴν ἡλίου δύσιν ἰδό
ντες φῶς ἐσπερινόν, ὑμνοῦμεν Πατέρα
καὶ Υἱὸν καὶ Ἅγιον Πνεῦμα Θεοῦ. Ἄξιος
[Ἀξιόν] εἶ [σε] ἐν πᾶσι καιροῖς ὑμνεῖσθαι
φωναῖς ὁσίαις [αἰσίαις], Υἱὲ Θεοῦ, ζῶν
ὁ διδούς διὸ ὁ κόσμος σὲ δοξάζει.